ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 29

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28.02.2018թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 31-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատում:
   /Զեկուցող Մ. Ս. Աթոյան/
2. ԵՊՀ ԻՄ–ի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցանկի հաստատումը:
   /Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան/
3. ԵՊՀ-ի բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգում տեղի ունեցած լրացումների մասին:
   /Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան/
4. ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն տրամադրելու կարգի հաստատումը:
   /Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան/
5. ԵՊՀ ԻՄ-ի 2017-2018 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի և առաջին կիսամյակի լուծարքային շրջանների նախապատրաստական աշխատանքների

մասին:

/Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան/

6. Ընթացիկ հարցեր.

6.1 ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի քարտուղար, «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Մ.Ս. Աթոյանի դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու հարցը:

6.2 «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Ա. Հովհաննիսյանի «Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում» աշխատությունը հրատարակության երաշխավորելու հարցը:

6.3 ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու մասին:

6.4 ‹‹ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում›› իրավական ակտի վերանայված տարբերակի հաստատումը:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին</u>՝ «ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատումը›› հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար Մ. Ս. Աթոյան հաղորդումը: Նշվեց, որ գիտական խորհրդի հաստատմանն ներկայացված 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի գիտխորհրդի ժամանակացույցի նախագիծը կազմված է հաշվի առնելով ԵՊՀ համապատասխան ժամանակացույցը և ԵՊՀ ԻՄ-ի բոլոր

ստորաբաժանումների ժամանակացույցները և ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020թթ. ռազմավարական ծրագիրը:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, ՈՒՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել գիտական խորհրդի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի ժամանակցույցը համաձայն հավելված 1-ի:

Որոշեցին

Որոշում 29/1

Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի ժամանակցույցը, համաձայն հավելված 1-ի:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ–ի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցանկի հաստատումը›› հարցի կապակցությամբ ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս.Ա. Առաքելյանը նշեց, որ ֆակուլտետների գիտական խորհուրդները քննարկել և մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացրել անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:

Գիտխորհրդի հաստատմանն է ներկայացված.

1) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «**Պատմություն**» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի **Վանուհի Սամվելի Գևորգյանին՝ «Մխիթար Գոշ»** անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

2) Տնտեսագիտության ֆակուլտետի «**Սերվիս**» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի **Նարինե Վարդանի Մխիթարյանին՝ «Սահակ Զորափորեցի»** անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու և հասարակական ակտիվ գործունեության համար:
3) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանող **Էլինա Իշխանի Խաչատրյանին՝ «Շառլ Ազնավուր»** անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:
4) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի **Լիլիթ Արամի Ֆարմազյանին՝ «Երկրապահ»** անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Բ. Խուդավերդյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Մ. Ա. Զաքարյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Ա. Ներսիսյանը: Նրանք մասնավորապես նշեցին, որ նշված ուսանողների հասարակական ակտիվությունը որոշվել է ըստ ֆակուլտետների ուսանողական խորհուրդների ներկայացման:

Որոշեցին

Որոշում 29/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «**Պատմություն**» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի **Վանուհի Սամվելի Գևորգյանին**՝ 2017–2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել **«Մխիթար Գոշ»** անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

Որոշում 29/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Տնտեսագիտության ֆակուլտետի «**Սերվիս**» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի **Նարինե Վարդանի Մխիթարյանին**՝ 2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել **«Սահակ Զորափորեցի»** անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

Որոշում 29/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի

պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանող **Էլինա Իշխանի Խաչատրյանին** 2017–2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ փետրվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը, նշանակել՝ **«Շառլ Ազնավուր»** անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

Որոշում 29/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի **Լիլիթ Արամի Ֆարմազյանին**՝ 2017–2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ փետրվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը, նշանակել **«Երկրապահ»** անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

Օրակարգի երրորդ՝ « ԵՊՀ-ի բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգում տեղի ունեցած լրացումների մասին›› հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց

ԵՊՀ-ի բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգում տեղի ունեցած լրացումների մասին, մասնավորապես անդրադարձավ կարգի 5-րդ և 6 րդ կետերին, որոնք նոր էին ավելացվել.

5. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

5.2. Ուսանողի արդյունարար միավորը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների նշանակած արդյունարար միավորների միջինն է:

5.3. Ուսանողի ավարտական աշխատանքը գնահատում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի միայն այն անդամները, ովքեր ներկա են եղել տվյալ ուսանողի պաշտպանության ամբողջ ընթացքում:

5.4. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատման արդյունքները հրապարակվում են ամփոփումից անմիջապես հետո՝ ուսանողների ներկայությամբ:

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

6.1. Գնահատման արդյունքների հրապարակումից հետո՝ հանձնաժողովի նախագահը ներկա ուսանողներին հարցնում է բողոքների առկայության մասին:

6.2. Ուսանողը գնահատման արդյունքների հրապարակումից անմիջապես հետո՝ դրանց վերաբերյալ բողոքի առկայության դեպքում դիմում է ներկայացնում հանձնաժողովի նախագահին:

6.3. Բողոքարկումն իրականացվում է, եթե առկա են «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» վերոնշյալ կարգի (այսուհետև՝ Կարգ) ընթացակարգային դրույթների խախտումներ:

6.4. Հանձնաժողովի նախագահը դիմումը ստանալուց անմիջապես հետո շրջանավարտին է ներկայացնում հանձնաժողովի անդամների գնահատումների արդյունքները՝ համաձայն սույն կարգի 5.1. կետում սահմանված չափանիշների և չափորոշիչների։

6.5. Գնահատման գործընթացում ընթացակարգերի կիրարկման և գնահատման միավորների հաշվարկման ու ամփոփման սխալների հայտնաբերման դեպքում՝ հանձնաժողովը.

ա) փոխում է ուսանողի գնահատականը, եթե հայտնաբերված խախտումը կամ սխալն ազդել են գնահատման արդյունքի վրա,

բ) չի փոխում գնահատականը եթե սխալը կամ թերությունը չեն ազդել գնահատման արդյունքի վրա,

գ) չեղարկում է պաշտպանության արդյունքները, եթե առկա են Կարգի ընթացակարգային լուրջ խախտումներ և անմիջապես կազմակերպում է նոր պաշտպանություն։

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը կարևորեց կատարված փոփոխությունները և հավելեց, որ ԵՊՀ ԻՄ-ի կառաջնորդվի նույն ԵՊՀ-ի կարգով, առանց փոփոխությունների և նոր կարգ հաստատելու անհրաժեշտությունը չկա:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի գիտակազմակերպական բաժնի վարիչ, ֆ.մ.գ.թ., դոցենտ Մ. Աթոյանը և Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողները սովորում են ԵՊՀ –ի կրթական ծրագրերով և ստանում են նույն որակավորումը ինչ որ ԵՊՀ –ի ուսանողները, հետևաբար նոր կարգ ընդունելու կարիքը չկա:

Որոշեցին

Որոշում 29/6

Հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետի պահանջները ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի ավարտական աշխատանքների պաշտպաններություններն անցկացնել համաձայն «ԵՊՀ-ի բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ»-ի /տես հավելված 2/:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգի չորրորդ՝</u> «ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն տրամադրելու կարգի հաստատումը» հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ը իր 2016-2020թթ. ռազմավարական ծրագրում նախատեսել է գիտական գործունեության ակտիվացում, այդ նպատակով 2017թ. հոկտեմբերի մեկից ԵՊՀ ԻՄ-ում գործում է գիտակազմակերպական բաժինը, որը և առաջնորդվելով ԵՊՀ –ի համապատասխան կարգերով, մշակել և ներկայացրել է գիտական խորհրդի քննարկմանը «ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն տրամադրելու կարգը» /հավելված 3/, որը նպատակ է հետապնդում խրախուսել ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցների կողմից կազմակերպվող գիտաժողովների անցկացումը դրամական աջակցության միջոցով:

Որոշեցին

Որոշում 29/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի

պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն տրամադրելու կարգը»՝ համաձայն հավելված 3-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգի հինգերորդ՝</u> « ԵՊՀ ԻՄ-ի 2017-2018 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի և առաջին կիսամյակի լուծարքային շրջանների նախապատրաստական աշխատանքների մասին» հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ հեռակա ուսուցման դասերը սկսվում են սույն թվականի մարտի մեկից, տևողությունը մոտ մեկ ամիս, բոլոր ստորաբաժանումները պետք է սերտ համագործակցեն այս գործընթացը արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար, այն աշխատակիցները, ովքեր ցանկություն կհայտնեն հեռակա ուսուցման պրոցեսին առավել ակտիվ մասնակցություն ունենալու համար կպարգևատրվեն:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ հեռակա ուսուցման բաժնի 966 ուսանողներից 537 ուսանող ունի լուծարք, այսինքն ունենք 45% առաջադիմություն, որը մտահոգիչ է, ավելին վերոհիշյալ 537 ուսանողից 287 ուսանողներ ունեն 3 և ավելի պարտք (ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփ տվյալները տես հավելված 4): Նա հավելեց, որ պատկերը շատ տխուր է, բայց պետք է

շարունակենք օբյեկտիվ մոտեցումը, եթե նույնիսկ շատ ուսանողներ դուրս մնան, կարևորը կրթության բարձր որակի ապահովումն է: 14 օրվա մեջ անց է կացվելու 2 լուծարքային շրջան, պետք է հնարավորինս կազմակերպված և օբյեկտիվ, համատեղ ուժերով անցկացնենք այս երկու լուծարքային շրջանները:

Ընթացիկ հարցեր:

6.1 Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Մհեր Սերգեյի Աթոյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին›› հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի 2017թ. դեկտեմբերի 15-ի թիվ 5 նիստում քննարկվել է նույն ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Մհեր Սերգեյի Աթոյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Մհեր Սերգեյի Աթոյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցույթային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Մհեր Սերգեյի Աթոյանը ԵՊՀ ԻՄ-ում 13 տարի անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Նա աչքի է ընկնում գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների հարուստ փորձով և արհեստավարժությամբ, նրա դասախոսական աշխատանքը բնութագրվում է բարձր մակարդակով և նյութի մատուցման հմտությամբ, ինչը մեծապես խթանում է ուսանողների իմացական հետաքրքրությանը:

Մ. Աթոյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2005 թ.-ին, 2007-2009թթ աշխատել է որպես ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնագիտական ֆակուլտետի փոխդեկան, 2008թ-2013թ՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնագիտական ֆակուլտետի ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչ, 2013թ-2014թ ԵՊՀ ԻՄ-ի Տնօրենի օգնական, 2014թ.-ից՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի քարտուղար, 2017թ.-ից սկսած՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտակազմակերպական բաժնի վարիչ: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո նա ունի 7(յոթ) հրատարակած գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք:

Նա համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. Ենթակետի, որը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր գիտական կոչում շնորհող ԲՈՒՀ-ում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ և վերջին 3 տարվա ընթացքում այդ ԲՈՒՀ-ում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան

գիտամանկավարժական գործունեություն» կարող է հավակնել դոցենտի գիտական կոչման:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Միհեր Սերգեյի Աթոյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Այնուհետև Ս. Ա. Առաքելյանը քվեարկության դրեց Միհեր Սերգեյի Աթոյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու համար երաշխավորելու և ԵՊՀ գիտխորհրդի միջնորդությանը դիմելու հարցը:

Որոշեցին

Որոշում 29/7

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Միհեր Սերգեյի Աթոյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի ‹‹Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ ‹‹Դոցենտի գիտական կոչում շնորհելը›› բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Միհեր Սերգեյի Աթոյանին դոցենտի գիտական աստիճան ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Միհեր Սերգեյի Աթոյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

6.2 Լսեցին - «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Ա. Հովհաննիսյանի «Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում» աշխատությունը հրատարակության երաշխավորելու հարցի մասին ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի թիվ 3 նիստում քննարկվել է այս հարցը և որոշում է կայացրել դիմել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Ա. Հովհաննիսյանի «Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում» աշխատությունը հրատարակության երաշխավորելու համար: Նա նշեց, որ այն նպատակաուղղված է խորացնելու և ամրապնդելու ուսանողների, դասախոսների և հայագետների մոտ կիլիկյան շրջանի հայ եկեղեցու պատմության առավել կարևոր դրվագները և իրադարձությունները, ինչպես նաև ցույց տալու Հռոմկլայի և Սսի կաթողիկոսությունների կառավարման ժամանակաշրջանում հայկական մշակույթի ձեռքբերումները: Աշխատությունը կօգնի ուսանողներին ընդլայնելու աշխարհայացքը ունիթորների և հակաունիթորների պայքարի մասին:

Աշխատությունը գրախոսվել է պ.գ.դ. Վ. Տեր-Ղևոնդյանի, պ.գ.թ. Դ. Թինոյանի, պ.գ.թ. Լ. Մկրտումյանի կողմից:

Որոշեցին

Որոշում 29/8

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Երաշխավորել հրատարակման ԵՊՀ ԻՄ-ի հայոց պատմության և հասարակագիտությանի ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Ա. Հովհաննիսյանի «Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում» աշխատությունը:

6.3 Լսեցին - ‹‹ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու մասին›› ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը: Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական կառույցներում տեղի են ունեցել փոփոխություններ, որը ենթադրում է նաև գիտական խորհրդում ընդգրկված ուսանողների փոփոխություն:

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի կազմում ընդգրկվող ուսանողներն են.

1 Շաղբաթյան Իսկուհի Համլետի ԵՊՀ ԻՄ ՈՒԽ-ի նախագահ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի

2 Ղարագյոզյան Հրանտ Սանդրիկի ԵՊՀ ԻՄ ՈՒԳ նախագահ, Տնտեսագիտության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող

3 Առաքելյան Միհեր Վահագնի Բնական գիտությունների ֆակուլտետի ԻԿՄ 1-ին կուրսի ուսանող

4 Պարոնյան Արինա Արմենի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ԱԼԳ 3-րդ կուրսի ուսանողուհի

5 Օթարյան Էդգար Գրիգորի Կիրառական արվեստի ֆակուլտետի դիզայն 2-րդ կուրսի ուսանող

6 Փայտյան Վազգեն Գրիգորի Բնական գիտությունների ֆակուլտետի ԻԿՄ 2-րդ կուրսի ուսանող

7 Ասրյան Անի Արտակի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ԱԼԳ 2-րդ կուրսի ուսանողուհի

8 Վերանյան Արփինե Արամի Տնտեսագիտության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի

Որոշեցին

Որոշում 29/9

Ընդունել ի գիտություն:

6.4 Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում» իրավական ակտի վերանայված տարբերակի հաստատումը:

Որոշեցին

Որոշում 29/10

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում»՝ համաձայն հավելված 5-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ –ի գիտական խորհրդի 27.05.2014թ. նիստում հաստատված «ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում» իրավական ակտը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ_____ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ

28.02.2018թ.